# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Սիսիան համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումները ցույց են տալիս, որ օրենսդիրը համայնքում սոցիալական պաշտպանությունը դիտարկում է որպես համայնքի պարտադիր խնդիր, իսկ սոցիալական աջակցության տրամադրումը՝ որպես համայնքի կամավոր խնդիր :

Նախագծի ընդունման արդյունքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրումը համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կարող է իրականացվել ենթաօրենսդրական իրավական կարգավորումների համատեքստում, ինչը հնարավորություն կընձեռի թե՛ համայնքի ղեկավարի և թե՛ համայնքապետարանի աշխատակազմի պաշտոնատար անձանց համար գործելու բացառապես իրենց վերապահված լիազորությունների և գործառույթների շրջանակներում՝ ապահովելով սոցիալական աջակցության տրամադրման գործընթացներում օրինականության պահպանումը:

Նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի համայնքային մակարդակում խրախուսելու և բարելավելու սոցիալական ծառայությունների ուղղությամբ իրականացվող և իրականացվելիք ծրագրերը, հիմքեր և նախադրյալներ ստեղծելով այս բնագավառում ծրագրային գործողություններ իրականացնելու համար:

**Կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի պետ՝** **Ն.Հովհաննիսյան**

**07.05.2025թ**

## ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 34-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Սիսիան համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում,իսկ ծախսային հատվածում պլանավորումներն արդեն իսկ կատարված են:

**Կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի պետ՝** **Ն.Հովհաննիսյան**

**07.05.2025թ**